Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՄ <<Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ ենթակա ուսուցիչների վերապատրաստում>>

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը համագործակցային մեթոդով*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝ *ՄԱՐՏՈՒՆԻ*

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԲԵՅԲՈՒԹՅԱՆ ՀԱՄՄԻԿ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ԿԱՐԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ*

ԴՊՐՈՑ՝ *<<Զորագյուղի հիմնական դպրոց>>*

Մարտունի – 2022

Բովանդակություն

1.Ներածություն……...3

2.Գրական ակնարկ……6

3.Փորձարական հետազոտություն……..9

3.1.Խմբի նակարագիրը…….....9

3.2.Փորձարարական դաս-1……..9

3.3.Փորձարարական դաս-2…….....12

4.Վերլուծություն……15

5.Գրականության ցանկ……16

6.Հավելված…….....17

1.Դասապլան-1……..17

2.Դասապլան-2……..21

1.Ներածություն

Առակը փոքրածավալ, այլաբանական բովանդակություն ունեցող պատմողական ստեղծագործություն է որում հաճախ մարդկանց փոխարեն հանդես են գալիս կենդանիներ, բույսեր, տիեզերական մարմիններ, որոնք անձնավորված են:

Առակները առաջացել են Հին Հունաստանում և հին քաղաքակրտություն ունեցող այլ երկրներում: Հայտնի առակագիրներից է Եզոպոսը, ում առակները թարգմանվել են մի շարք լեզուներով, յոթերորդ դարում՝ նաև հայերեն: Հայ գրականության մեջ առակներն երևում են միջնադարից: Տասնմեկերորդ դարի հայտնի մանկավարժ, պետական գործիչ, մատենագիր Գրիգոր Մագիստրոսը իր թղթերում օգտագործել է բազմաթիվ առակներ: Առակներ կան նաև Աստվածաշնչում:

Հիսուսը շատ հաճախ խոսում է առակներով, որպեսզի իր խոսքն ավելի պարզ ու հասկանալի լինի: Նա առակը բաժանում է երկու մասի՝ բուն առակ և առակից բխող եզրակացություն: Որոշ առակներ առնչություններ ունեն Նաև առած-ասացվածքների հետ և շատ հաճախ դրանց հաստատումն են:

Առակներն ունեն քննադատական, խրատական, հաճախ երգիծական բովանդակություն և խորը դաստիարակչական նշանակություն: Նրանցում քննադատվում են մարդկային վատ հատկանիշներն ու գովաբանում լավը, բարին:

Առակները կարևոր դեր ունեն երեխաների դաստիարակության գործում, քանի որ նրանք երեխաների մեջ դաստիարակում են այնպիսի որակներ, որոնք անրաժեշտ են լավ մարդ ու հասարակության արժանի քաղակացի ձևավորելու հարցում:

Ցավոք չարությունն ու խաբեությունը այժմ շատ տարածված են հասարակությանը <<դարձի բերելու>>, ճիշտ ուղղու վրա դնելու համար անրաժեշտ է նախ կրթել, ճիշտ ու

Ե ղղու վրա դնել երեխաներին:

րեխաները ազգի ապագան են և նրանց դաստիարակությունից է կախված ազգի հետագա ճակատագիրը:

Առակի ուսուցման ընթացքում անրաժեշտ է նկատառել հետևյալ նրբությունները.

. Աշակերտներին չի կարելի անմիջաբար <<հրամցնել>> առակի այլաբանական և փոխաբերական իմաստները. Սովորողն ինքը պետք է բացահայտի և վերլուծի առակի բարոյախրատական ուղղվածությունը, հասկանալու, թե առակի մեջ որն է իրականը, որը՝ երևակայականը:

. Բարոյախրատական իմաստի բացահայտումից հետո ցանկալի է համապատասխան խորհուրդ ունեցող առածների և ասացվածքների միջոցով ամրակայել սովորողների գիտելիքները:

. Հարկավոր է ոչ միայն դերերով կարդալ առակը, այլև բեմականացնել նրա բովանդակային հատվածները:

. Առակը, որպես ուսուցման կարևորագույն բաղադրիչ և գիտելիքների կառուցմանը, հմտությունների ու կարողունակությունների ձևավորմանը նպաստող գործոն:

. Առակներն իրենց մեջ ներառում են հայրենասիրությունը, քարոզում են սեր, հոգատարություն:

. Ներառում են համերաշխություն, ընկերասիրություն:

. Նպաստում են երեխաների ժողովրդավարական առժեհամակարգի ձևավորմանը:

. Առակներում մերժվում են սուտն ու մնացած այլ ստորությունները, որոնք իսկապես ահռելի թափն են ստացել վերջին ժամանակներում:

Մայրենիի ուսուցման հիմնական նպատակը աշակերտների մեջ ձևավորել առժեհամակարգ՝ մայրենի լեզվի հանդեպ:

Քանի որ, միջին դպրոցում աշակերտների համար մի փոքր դժվար է յուրացնել մայրենիի դասերը, ուստի կարելի է կիրառել համագործակցային մեթոդ-ուսուցումը, մեթոդը՝ ապահովելով նրանց ներգրավածությունը մայրենիի դասաժամերին:

2.Գրական ակնարկ

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է:

Համագործակցային ուսուցումն ապահովում է մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի ակն ունի նաև հաստատական գործառույթ: Համագործակցային բազմազան հմտություններ են անրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար: Ուստի, այդ հմտությունների ձևավորումն ու զարգացումը պետք է իրականացնել ուսուցման և ուսումնառության գործընթացը՝ ապահովելով դրանց արդյունավետության գիտակցումն և ձեռքբերումները:

Համագործակցային ուսուցումը լայն տարածում է գտել աշխարհում: Այն ավելի առավել է կիրառվում՝ որպես աշխատանքային դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային մեթոդ-ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է, որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար՝ ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը միջանձնային հմտությունների զարգացումը և այլն:

Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում:

Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ: Դրանք են՝ Աշակերտների թիմային առաջադիմություն, Խճանկար, Շրջվիր դեպի զույգդ, Պրիզմա, Խմբային հետազոտություն, Շրջագայություն պատկերասրահում և այլն:

Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով:

Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Հասարակությունը դպրոցին և ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը, այս մեթոդի առավելությունն այն է, որ ոչ միայն հմտություններին են տիրապետում, այլ այն առժեքները և կյանքում դրանք կիրառելը:

Դասի կազմակերպման ժամանակ ուսուցչի աշխատանքը կլինի բոլոր խմբերի աշխատանքի վերահսկումն ու ուղղորդումը:

Ցանկացած դաս և դասարան եզակի է ուստի ուսուցչի վարպետության ցուցանիշներից մեկը նպատակին համապատասխան մեթոդի ընտրությունն է:

Համագործակցային մեթոդի առավելություններն են.

. Յուրաքանչյուր անհատին դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:

. Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու:

Համագործակցային ուսուցման ընթացքում շատ կարևոր է փոքր խմբերով աշխատելու առավելությունները:

Փոքր խմբերով ուսուցումն ունի հետևյալ նպատակները.

. Զարգացնում է խնդիրներ լուծելու կարողությունները:

. Զևավորում է հաղորդակցման հմտություն:

. Աշակերտները սովորում են մի մյանցից:

. Զարգանում է աշակերտների պատասխանատվության զգացումը:

. Մի մյանց հաշվետու լինելու հատկությունը՝ խմբի ընդհանուր հաջողությունն ապահովելու հարցում:

. Խթանում է թիմային աշխատանքը:

. Ապահով և նպաստավոր միաջավայր է ստեղծում գիտելիքներն ու հմտությունները դրսևորելու համար:

. Քննարկումների միջոցով ամրապնդվում է աշակերտների հուզմունքները:

. Ընձեռում է ակտիվ մասնակցություն և ինքնադրսևորման հնարավորություն:

Քանի որ միջին դպրոցում աշակերտների համար մի փոքր դժվար է յուրացնել 5-րդ դասարանի մայրենին, դասին բոլոր խմբերի և աշակերտների համար համագործակցային մեթոդը արդյունավետ է՝ ապահովելով նրանց ներգրավածությունը մայրենիի դասաժամերին:

3.Փորձարարական հետազոտություն

3.1. Խմբի նկարագիրը

Ես իմ հետազոտական աշխատանքը անցկացրել եմ Գեղարքունիքի մարզի Զորագյուղի հիմնական դպրոցի 5-րդ դասարանում: Դասին ներգրավված են բոլորը, ուստի կիրառում եմ համագործակցության ուսուցում-մեթոդը: Ինչը կնպաստի զարգացնել աշակերտների մոտ առակների հետ ճիշտ աշխատելու, ճիշտ հասկանալու, ճիշտ եզրակացություններ անելու և կյանքը ճիշտ ճանաչելու հմտությունները:

Այս դասարանում սովորում են 15 աշակերտ՝ 10 տղա և 5 աղջիկ, որոնք ունեն տարբեր հմտություններ, ունակություններ:

Մայրենի առարկան անցնում են շաբաթական 7 դասաժամով և դասացուցակում տեղադրված է 2-3-4-րդ ժամերին:

Այս դասարանում, այս տարին եմ անցկացրել փորձարարական դաս. քանի որ այս մեթոդի շնորհիվ կարողացա պատկերացում կազմել այս առարկայից՝ օգտագործելով իմ մանկավարժական հմտությունները և կարողությունները:

Այս դասարանի հիմնական խնդիրն է աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսի մեջ, ինչը պատճառ դարձավ, որ ես իմ հետազոտական աշխատանքը իրականացնեմ տարբեր կարողությունների տեր աշակերտների համար և կազմակերպել համագործակցային ուսուցումը խմբերի միջոցով:

3.2.Փորձարարական դաս-1

Այսօրվա դասը առակների մասին է (տե՛ս դասապլան-1 էջ՝17)

Դասաժամն սկսեցի տնային աշխատանքի ստուգումով (5 րոպե):

Բոլորը ներկայացրին իրենց տնային աշխատանքները՝ որոշակի սխալներով:

Քննարկվեց տնային աշխատանքի սխալներ, տրվեց բանավոր հետադարձ կապ: Ես երեխաների հարցրեցի թե մեր նոր առակները ինչի մասին են: Աշակերտներին հարց տրվեց անցած դասի՝ <<Հիսուսի առակները>> թեմայի վերաբերյալ: Աշակերտները ճիշտ ձևով վայրկյանների ընթացքում պատասխանեցին:

Դասարանը բաժանեցի երեք խմբի:

Առաջին խմբին հանձնարարեցի <<Մարգարիտն ու փրփուրը>> առակը: Երեխաներին նախապես էլեկտրոնային եղանակով տրամադրել էի նյութեր իրենց համար ընտրված առակի վերաբերյալ: Նյութերը տրվել էին տեսանյութերի, գրքերի, մուլտֆիլմերի տեսքով: Մինչ հաջորդ դասը յուրաքանչյուր խումբ ուսումնասիրում է իրեն ուղարկված նյութը, կատարում նշումներ ներկայացնում առակի այլաբանական իմաստն ու գաղափարը:

Երկրորդ խմբին հանձնարարում եմ Եզոպոսի <<Աղվեսն ու հովազը>>:
Երրորդ խմբին հանձնարարում եմ <<Գայլերն ու ոչխարները>> առակը:

Աշակերտներին բաժանում եմ պաստառներ, գունավոր նշիչներ, գունավոր կպչուն թղթեր, որոնց վրա պիտի գրեն առակի առանձնահատկությունները և պաստառի վրա ներկայացնել իրենց առակը:

Այս աշխատանքների համար տրամադրել եմ 15 րոպե:

Ամեն մի խումբ աշխատում է յուրովի՝ օգտագործելով իրենց ունակությունները:

Դասի սկզբում կիրառել եմ <<Մտագրոհ>> մեթոդը: Գրատախտակին գրել առակ բառը և գրառել աշակերտների թվարկաց բոլոր բառերը: Այս մեթոդը կկենտրոնացնի աշակերտներին, կօգնի վերհիշել առակի մասին իրենց գիտելիքները;

Առաջին խումբը վերջացնելով <<Մարգարիտն ու փրփուրն>> առակը ճիշտ ձևով տվեցին առակի հիմնական գաղափարը, համեստությունը, սեփական արժեքը գնահատելը և ներկայացրել էին գեղեցիկ աղջկա տեսքով:

Առաջին խումբը իր առջև դրված առաջադրանքը հոյակապ էր կատարել:

Երկրորդ խմբին հանձնարարում եմ Եզոպոսի <<Աղվես ու հովազը>>:

Աշակերտները պաստառի վրա նկարել էին աղվեսին ու հովազին:

Բացատրեցին, որ աղվեսն ու հովազը վիճում են թե իրենցից ով է ավելի գեղեցիկ:

Հովազը պարծենում է իր նախշավոր մորթիով, իսկ աղվեսը նրան պատասխանում է, որ ինքը ավելի գեղեցիկ է քանի որ, ոչ թե մարմինն է նախշուն, այլ հոգին է ճարտար ու չկուն:

Աշակերտները պաստառի միջոցով տվեցին այն գաղափարը, որ խելքն ու մտքի ճկունությունը ֆիզիկական գեղեցկությունից կարևոր և ցանկալի է: Այս խմբին տալ << Ոչ թե նա է ուժեղ, ով ուժ ունի, այլ նա, ով…>> նախադասությունը և աշակերտներին ասել, որ շարունակել այն և ներկայացնել սեփական կարծիքը:

Երբ աշխատանքը ավարտեցին կազմակերպեցի քննարկում զուգադրել կարծիքները:

Երրորդ խմբին հաձնարարեցի <<Գայլերն ու ոչխարները>> առակը: Այս խումբը ավելի թույլ էր, քան մյուս երկու խմբերը: Աշակերտները հիմնավորեցին, որ թշնամուն վստահելու և հարազատին դավաճանելու հետևանքները շատ ցավոտ են լինելու: Այս առակում աշակերտները արժեվորեցին հավատարմությունը, ազնվությունը և դրվատվում են կեղծիքն ու շահամոլությունը. գայլերը կարողանում են համոզել ոչխաչրներին, որ իրենց թշնամանքի պատճառը շներն են: Նրանք պնդում են, որ եթե շները չլինեն իրենք հաշտ ու խաղաղ կապրեն: Վերջում գայլերը մտնում են հոտի մեջ և բոլոր ոչխարներին ուտում:

Կշռադատման փուլում կիրառում են հինգ րոպեանոց շարադրանք մեթոդը և հանձնարարել աշակերտներին ներկայացնել խումբ առ խումբ իրենց առակի վատ կողմերը և ներկայացնել կատարյալ մարդու իրենց իդեալը:

Երրորդ խումբը այս վերջին հարցադրմանը ավելի ակտիվ էր, քան մյուս խմբերը:

Այս աշխատանքները՝ պաստառի բացատրման ժամանակ օգտագործում եմ պատկերասրահի մեթոդը՝ ամեն մի խումբ բացատրում է իրենց պաստառի նկարների առժեքները:

Այս աշխատանքին տվել եմ 10 րոպե:

Հանձնարարում եմ տնային աշխատանք էլէկտրոնային եղանակով երեխաներին ուղարկում եմ Խնկո Ապոր <<Ագռավն ու աղվեսը>>, որը պետք է կատարեն երեք խմբերը: Բացատրում եմ նոր դասը և տալիս եմ տնային հանձնարարություն, որ կարդան այդ առակը: - 10 րոպե

Այս առակների միջոցով ես երեխաների մեջ ձևավորեցի մեծ արժեքային համակարգ՝ հեռու մնալ եսասիրությունից, միշտ լինել ազնիվ, բարեսիրտ, օգնող, հոգեպես հարուստ, միշտ հարազատների և բարեկամներին լսող:

Վերջում աշակերտներին գնահատել խումբ առ խումբ: - 5 րոպե

3.3.Փորձարարական դաս-2

Այսորվա դասին թեման է Խնկո Ապոր <<Ագռավն ու աղվեսը>> (տե՝ս դասապլան-2 էջ՝21)

Դասն սկսում ենք տնայինների ստուգումով և չհասկացված վարժությունների բացատրումով: ՈՒսուցիչը հարց է տալիս, թե ունեն անհասկանալի հարցեր: Վաթժությունների մեջ կային անհասկանալի հարցեր, որոնք պարզաբանելուց հետո անցնում ենք տնայինների ստուգմանը: -5րոպե:

Ես աշակերտներին հարցնում եմ, թե մեր անցած դասն որն է: Աշակերտներըն ասում են, որ առակներն են: Երեխաները հիշեցնում են, որ տվել եմ տեսանյութեր էլեկտրոնային եղանակով:

Դասարանը բաժանել երեք խմբերի: Երեք խմբերին էլ տալիս եմ նույն առաջադրանքները<<Ագռավն ու աղվեսը>>:

Խթանման փուլում կիրառում եմ <<Մտագրոհ>> մեթոդը: Աշակերտներին այս մեթոդը պետք է կենտրոնացնելու և ակտիվացնելու համար:

Համագործակցային մեթոդով սկսում են աշխատել խմբերով՝ 1-ին, 2-րդ, 3-րդ:

Ամեն մեկն յուրովի է պատկերացնում այս առակը: Այս աշխատանքի համար տալիս եմ 15 րոպե:

Խմբերն ավարտում են աշղատանքը և պաստառների ձևով ամեն խմբից մեկ աշակերտ ներկայացնում է խմբի աշխատանքը:

Ինձ շատ դուր եկավ 3-րդ խմբի աշխատանքը, որը կատարել էին միջին ունակությունների տեր աշակերտները: Որովհետև գեխեցիկ ձևով են պատկերել պաստառի վրա:

Ես այս փուլում կիրառել եմ համագործակցային մեթոդը: Այս մեթոդով աշակերտները աշղատում են թիմերով, իրար հետ կարողանում են համագործակցել:

Հաջորդ փուլում կիրառել եմ պատկերասրահ մեթոդը:

Խմբերից մեկ անդամ ներկայացնում է իրենց աշխատանքը, իսկ մյուս երկու խմբերը շրջում են և ուսումնասիրում նյութը քննարկում և հայտնում իրենց կարծիքը: Կատարվում է անդրադարձ:

Այս առակի ուսումնսիրրության նպատակը այն է, որ առակները ներկայացնում են նորովի, այսինքն՝ ինտերակտիվ մեթոդներով և աշակերտների մեջ ձևավորվում է արժեքային համակարգ:-10 րոպե:

Կշռադատման փուլում կիրառել 5 րոպեանոց շարադրանք մերոդը և հանձնարարել ներկայացնել խորամանկությունը որպես վատ երևույթ՝ աղվեսի ագռավի մոտից պանիրը տանելը:-5 րոպե:

Նոր դասի Ավ. Իսահակյանի <<Կյանքից թանկ բանը>> ստեղծագործությունը սովորել անգիր, սովորել նաև վանկ թեման: - 5 րոպե:

Աշակերտներին գնահատում եմ, հանձնարարում տնային աշխատանքը և բացատրել տնային աշխատանքը: Հանձնարարել վարժ. 2-8: -5 րոպե:

6.Հավելված

Դասապլան - 1

Ուսուցիչ՝ Կարինե Մովսիսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	02.02.2022	Կիսամյակ	II	Դասարան	V
Թեմա՝	Առակները						
Օգտագործվող նյութեր՝	***Գրատախտակ,գիրք,կավիճ,տետր,համակարգիչ,պաստառներ***						
Դասի նպատակը՝	Ըմբռնել առակի ժանրին բնորոշ առանձնահատկություններ՝ արժևորել արժեհամակարգի ձևավորումը: Վերլուծել առակը, ներկայացնել այլաբանությունը: Բացահայտել առակի խրատա-դաստիարակչական դերը:						
Ուսուցման արդյունքները, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	Վերարտադրել առակի բովանդակությունը: Բացատրել առակի այլաբանությունը: Առանձնացնել գլխավոր միտքը և ընթերցողին տրվող խրատը:						
Գործողություններ (Ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն ***Աշակերտներ***	Ուսումնական գործունեություն ***Ուսուցիչ***	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)			
5 րոպե սկիզբ	Բացել դասագրքերը պատրաստվել նոր դասին:	Ողջունել դասարանին:					

	Ներկայացնել տնային աշխատանքները	Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Ուսուցիչը բացատրում է անհասկանալի հարցերը	*Ինչ անհասկանալի հարցեր կան տնային աշխատանքի մեջ*	
1 րոպե	Աշակերտները գալիս են գրատախտակի մոտ և ամեն մեկը գրում է առակի մասին	Ուսուցիչը գրատախտակին Գրում է առակ բառը և աշակերտներին ասում,որ մտածեն	*Ինչ է առակը*	*<<Մտագրոհի մեթոդ>>*
15 րոպե		Ուսուցիչը բաժանում է երեք խմբի էլէկտրոնային եղանակով տրամադրում է նյութեր իրենց համար ընտրված առակի վերաբերյալ		*Համագործակցային մեթոդ <<Մտածիր-զուգադրիր>>*

		Ուսուցիչը բաժանում է պաստառներ, գունավոր նշիչներ, կպչուն թղթեր		*Համագործակցային մեթոդ*
10 րոպե	Աշակերտները պաստառները ամրացնում են գրատախտակին և յուրաքանչյուր խմբից մեկ անդամ ներկայացնում է իրենց աշխատանքը, իսկ մնացած խմբերը, ուսումնասիրելով աշխատանքը քննարկում են և հայտնում իրենց կարծիքը	Խմբերն ավարտում են աշխատանքը, ուսուցիչն ասում է, որ աշակերտները հանձնեն իրենց աշխատանքները:		*Պատկերասրահի Մեթոդ*
5 րոպե	Մի խումբը պատասխանում է, մյուս խմբերը նայում են, թե մյուսները ինչ են կտարել		*Ինչ արեցինք, ինչու, ինչ նոր բան իմացանք*	*Շրջագայության մեթոդ Անրադարձ*

9 րոպե-ավարտ	Բացում են առակը և ուսուցչի ուղարկած նյութերը գտնում են և աշխատում տանը	Նոր դասի հանձնարարում: Խնկո Ապոր <<Ագռավն ու աղվեսը>> առակը և բացաբրել այն		
Տնային աշխատանք	***Էջ 38 վարժ. 2-8***			

Դասապլան – 2

Ուսուցիչ՝ Կարինե Մովսիսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	02.02.2022	Կիսամյակ	II	Դասարան	V
Թեմա՝	Խնկո Ապոր<<Ագռավն ու աղվեսը>>						
Օգտագործվող նյութեր՝	***Գրատախտակ,գիրք,կավիճ,տետր,համակարգիչ,պաստառներ***						
Դասի նպատակը՝	Ըմբռնել առակի ժանրին բնորոշ առանձնահատկություններ՝ արժևորել արժեհամակարգի ձևավորումը: Վերլուծել առակը, ներկայացնել այլաբանությունը: Բացահայտել առակի խրատա-դաստիարակչական դերը:						
Ուսուցման արդյունքները, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքները	Վերարտադրել առակի բովանդակությունը: Բացատրել առակի այլաբանությունը: Առանձնացնել գլխավոր միտքը և ընթերցողին տրվող խրատը:						
Գործողություններ (Ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն ***Աշակերտներ***	Ուսումնական գործունեություն ***Ուսուցիչ***	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ(ներ)			
5 րոպե սկիզբ	Բացել դասագրքերը պատրաստվել նոր դասին:	Ողջունել դասարանին:					

	Ներկայացնել տնային աշխատանքները	Ստուգել տնային աշխատանքները, բացատրել անհասկանալի մասերը Ուսուցիչը բացատրում է անհասկանալի հարցերը	*Ինչ անհասկանալի հարցեր կան տնային աշխատանքի մեջ*	
1 րոպե	Աշակերտները գալիս են գրատախտակի մոտ և ամեն մեկը գրում է առակի մասին	Ուսուցիչը գրատախտակին Գրում է առակ բառը և աշակերտներին ասում,որ մտածեն	*Ինչ է առակը*	*<<Մտագրոհի մեթոդ>>*
15 րոպե		Ուսուցիչը բաժանում է երեք խմբի էլէկտրոնային եղանակով տրամադրում է նյութեր իրենց համար ընտրված առակի վերաբերյալ		*Համագործակցային մեթոդ <<Մտածիր-զուգադրիր>>*

		Ուսուցիչը բաժանում է պաստառներ, գունավոր նշիչներ, կպչուն թղթեր		*Համագործակցային մեթոդ*
10 րոպե	Աշակերտները պաստառները ամրացնում են գրատախտակին և յուրաքանչյուր խմբից մեկ անդամ ներկայացնում է իրենց աշխատանքը, իսկ մնացած խմբերը, ուսումնասիրելով աշխատանքը քննարկում են և հայտնում իրենց կարծիքը	Խմբերն ավարտում են աշխատանքը, ուսուցիչն ասում է, որ աշակերտները հանձնեն իրենց աշխատանքները:		*Պատկերասրահի Մեթոդ*
5 րոպե		Ուսուցիչը կշռադատման փուլում է և հանձնարարում աշակերտների ներկայացնել կատարյալ մարդուն	*Ինչ արեցինք, ինչու, ինչ նոր բան իմացանք*	*Շրջագայության մեթոդ Անրադարձ*

9 րոպե-ավարտ	Բացում են առակը և ուսուցչի ուղարկած նյութերը գտնում են և աշխատում տանը	Նոր դասի հանձնարարում: Խնկո Ապոր <<Ագռավն ու աղվեսը>> առակը և բացաբրել այն		
Տնային աշխատանք	***Ինքնուրույն աշխատանք. ընտրել որևէ առակ և բացատրել այդ առակի գաղափարական բովանդակությունը***			

4.Վերլուծություն

Աշակերտների առաջադիմությունը հաշվի առնելու համար անցկացվեց երկու տարբերակված դասեր, որի ժամանակ՝ առաջին դասին տրվեց տարբեր խմբերին, տարբեր առակներ, որպեսզի ամեն մի խումբ յուրովի յատարի առջև դրված առաջադրանքները: Օգտագործել եմ համագործակցային մեթոդը՝ խմբերի բաժանելը, պաստառների պատրաստելը: Օգագործել եմ Պատկերասրահ մեթոդը և մեծ արդյունք ստացա:

Խթանման համար օգտագործել եմ <<Մտագրոհ>> մեթոդը, որ աշակերտները պրպտեն և իմանան թե ինչ է առակը: Ընդհանրապես միջին և ցածր առաջադիմություն ունեցող աշակերտները համագործակցում են միասին և շատ լավ արդյունք են ապահովում:

Իմ ուշադրության կետրոնում եմ պահել միջին կարևորություն ունեցող երեխաների և շատ ցածր առաջադիմություն ունեցող երեխաներին: Այս երեխաները աշխատում էին նկարել, վեր հանել առակի մեջ եղող բովանդակությունը և դա նրանց հաջողվում էր: Աշխատեցինք կարմիր գրված բառերի բացատրության հետ և արդյունքները գովացուցիչ էին, և շատ արդյունավետ էին:

Վերլուծելով հետազոտական դասերի արդյունքները՝ եկա այն եզրակացության, որ ներգրավվածության բարձրացումը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

. Արժևորվում է առակի ուսուցման դերը հիմնական դպրոցում:

. Ձևավորվում է արժեքային համակարգը 5-րդ դասարանում՝ բարու և չարի համադրումը, եսասիրության փնովումը, հոգու գեղեցկության դրվատումը, թշնամուն երբեք չվստահելն և չհավատալը:

5.Գրականության ցանկ

1. Ա. Դուլուխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008

2. Դ. Գյուրջնյան, Թ. Ալեքսանյան, Ա. Գալստյան, Մայրենի 5, Երևան 2019

3. Եզոպոս, Առակներ, Երևան, 1990

4. Ս. Սարուխանյան, Մ. Միրումյան, Ն. Դիշաղջանյան, Փուլային ուսուցման եղանակ, Երևան, 2014

5. Ադոլֆ Դիստերվեգ 23.11.2021

6. Շրջված դասարան 23.11.2021